եւ սիրում իր նոր ազգն ու հայրենիքը, ինչպէս երբեք մի օտար չէր սիրել հայն ու Հայաստանը...

Մեր աչքերի առջեւ էր, որ սկզբնաւորուեց դժբախտ վէպը, 1893-ի վերջերին, Ժընեւի մօտ, Օնէ գիւղում: Ժընեւը արդէն իսկ կենտրոնավայր էր հայ յեղափոխական պրոպագանդի: Երջանիկ օրեր էին, Հայաստանում դեռ չէր շարժուել համիդեան եաթաղանը, եւ բոլորի մէջ վառ էր յոյսը հայրենիքի մօտալուտ ազատութեան:

«Դրօշակ»ի տպարանը, ցարիզմից հալածական, ձգել էր Կովկասը եւ մէկ ու կէս տարի Ռումանիոյ մէջ թափառելէ յետոյ, փոխադրուել էր Ռոստոմի ձեռքով Ժընեւ եւ հաստատուել էր Pichet de Bock փողոցիկի մը անշուք սենեակում, ալքովի մէջ, ուր ապրում էր առժամապէս դպրատպի: «Դրօշակ»ը լոյս էր տեսնում 2–3 ամիսը մի անգամ եւ նրա միակ վարիչը Ռոստոմն էր, միանգամայն խմբագիր եւ գրաշար:

Այդպէս դատանք իրերը, երբ 1893ի սեպտեմբերին Խաժակը, ես ու մի քանի այլ կովկասցի երիտասարդներ եկանք Ժընեւ ուսանելու:

Քիչ յետոյ եկաւ եւ Յոնանը: Բայց նա նորեկ չէր այդ քաղաքում: Նա, այդտեղ եղել էր 4–5 տարի առաջ: Աւարտելով Շուշուայ թեմականը իր մի քանի նշանաւոր դարբաղցի ընկերների հետ (Նիկոլ-Դուման, Մեսրոպ եպիսկոպոսի եւայլն), աւարտելով այնուհետեւ Ներսիսեան դպրոցը, նա անցել էր Զուիցերիա եւ Ժընեւի համալսարանում ընտրել էր ընկերային գիտութեանց մասնաճիւղը: Իր քաղաքացիական եւ յեղափոխական մկրտութիւնը ստացել էր հայ մտաւորականների այն խմբի հետ միասին — Նազարբէգեան, Օհանեան, Ղարաջեան, Աթաբէգեան, եւայլն — որը 80-ական թուականների վերջերում, առժամանակ Փորթուգալեանի «Արմէնիա»ին աշխատակցելուց յետոյ՝ հիմնել էր «Հնչակ»ը:

Հարկադրուած իր ուսումը ընդհատելու՝ Յովնան վերադառնում է երկիր եւ երկու տարիի չափ, գլխաւորապէս Պարսկաստանի մէջ, զբաղւում է ուսուցչական ու յեղափոխական քարոզչութեամբ: Նիւթական միջոցներ ձեռք բերելով, նա վերստին, 1893ի աշնանը, գալիս է Ժընեւ: Գալիս է արդէն լրբեւ դաշնակցական գործիչ:

«Դրօշակ»ը սկսում է աւելի յաճախ լոյս տեսնել: Այժմ արդէն գրաշարները չորս հոգի են՝ Ռոստոմ, Յոնան, Խաժակ, Շեխանց, որոնցից առաջինը ամենէն հմուտ է, թէ լրբեւ շարող եւ թէ լրբեւ թերթի գլխավար:

Տղաները միեւնոյն ժամանակ հետեւում էին համալսարանական իրենց դասերին: Ապրում էին իւրաքանչիւրը իր սեփական միջոցներով. կազմակերպութիւնը տակաւին աղքատ էր, հաւաքած գրամը յատկացւում էր գլխաւորապէս զէնքի ու քարոզչութեան՝ երկրի մէջ: Իսկ Ժընեւ զրկւում էր հաղիւ այնքան, որ բաւէր թերթի չնչին ծախքերը հոգալու եւ համեստօրէն ապահովելու գլխաւոր խմբագիր-գրաշարին, որի սենեակը միանգամայն «Դրօշակ»ի խմբագրատունն էր:

Դէպքերը դահավիժուեցին հայրենիքում: Տեղի ունեցաւ Սասնոյ ջարդը եւ շատ չանցած՝ Բաբ Ալիի ցոյցն ու արիւնհեղութիւնը: Ռոստոմը ձգեց Ժընեւը, քարոզչական պտոյտի գնաց դէպի Բալկանները, իսկ 1895ի գարնան, որպէս ծպտեալ առեւտրական, ուղեւորուեց դէպի Կարին: Նրան հետեւեց Խաժակը՝ նախ դէպի Բուլգարիա ու Ռումանիա, պրոպագանդիստի պաշտօնով, ապա Եգիպտոս ու Իզմիր:

«Դրօշակ»ն անցաւ Յոնանի ձեռքը: Գրում էր եւ աւելի շատ՝ շարում էր: Իր ֆիզիքական ուժերէն վեր... Մի երկու տարուայ մէջ սեւ, մրոտ աշխատանքը անդրադարձաւ կրծքի, թոքերի վրայ: Յովնանը տանում էր անտրտունջ ու միշտ ժպտուն: Քովը՝ Հօրթանսը կար, աշխոյժ ու կենսուրախ զուիցերուհին, որ թեթեւացնում էր նրա հոգեկան բեռը, երբեմն նոյնիսկ յօդուածներ տալիս «Դրօշակ»ին, ուսումնասիրում էր անդադար հայոց լեզուն, թարգմանում էր Ռաֆֆիից յուզիչ հատուածներ եւ հրատարակում Ժընեւեան թերթերի մէջ:

1896ի ամառը «Դրօշակ»ի խմբագիրը գընաց Պոլիս, ուր այն ժամանակ պատրաստւում էր Բանկ Օսմանի դաւադրութիւնը: Դէպքից յետոյ՝ նորէն Ժընեւ է. բայց այնուհետեւ թերթն ու բիւրօական գործերը անցնում են գլխաւորապէս Վռամեանի ձեռքը — մինչեւ